

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«UUS»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ-1 ՏՈՒՖԵՐԻ ՀԱՆՔԵՐԵՎԱԿԱՍԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ  
2019-2021թթ. ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՀՐՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅ

«UUS» ՍՊԸ  
տնօրեն՝

Ա. ՀԱՅՔԱՆԻ



Երևան 2020

բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին»

ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

▪ ՀՀ կառավարության 24.12.2012թ.-ի թիվ 365-Ն որոշում, որով կարգավորվում են շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ընդերքօգտագործողների կողմից նախատեսված ոեկոլոգիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:

▪ ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտների տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:

▪ ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1463-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ոեկոլոգիվացման աշխատանքների նախազման, ոեկոլոգիվացման, ոեկոլոգիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

▪ ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

▪ ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

▪ ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,

▪ ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը:

հանդիպում են տափաստանային խմբավորումներ, որտեղ գերակշռող շյուղախոտի հետ մեկտեղ հացազգի այլ տեսակներ են (*Stipa lessingiana* – փետրախոտ Լեսինզի, *Bothriochloa ischaemum* – բոթրիոխլոա սովորական, *Koeleria cristata* – կելերիա սանրանման, *Agropyron cristatum* – սեղ սանրածն, դաշտավլուկ – *Poa*, ցորնուկ – *Bromus*, թիթեռնածաղկավորներից՝ երեքնուկ – *Trifolium*, եղջերավույտ – *Medicago*, տարախոտներից՝ եզան-լեզու – *Plantago*, երիցուկ – *Taracsacum*, հազարատերևուկ – *Achillea*, թթվիճ – *Betonica*, ուրց – *Thymus vulgaris*, եզակի՝ խոնդատ – *Verbascum*, բոխի – *Prangos*, իշկարթնուկ – *Euphorbia*, արյունխմիկ – *Sanguisorba*՝ սարի չամիչ – *Efedra*):


Ցորենուկային ֆորմացիաներ, որտեղ գերակշռում է *Bromus variegatus*: Ներկայումս պահպանվել են շատ քիչ տարածքներ, որտեղ նրան ուղեկցում են *F. ovina* – Շոշարի, *Koeleria cristata* – Կելերիա սանրանման, երբեմն *Stipa lessingiana* – Փետրախոտ Լեսինզի, *S. pulcherrima* – Փ.գեղեցիկ, *Artemisia fragrans* – օշինդր հոտավետ, *Achillea* – հազարատերևուկ, *Plantago* – եզան-լեզու: Հանդիպում են նաև՝ *Tragopogon* – սինձ, *Taracsacum* – խատուտիկ, *Betonica* – թթվիճ, *Vicia* – վիկ, *Trifolium* – երեքնուկ, *Cirsium* – փուշ, խոնդատ – *Verbascum*, իշկարթնուկ – *Euphorbia*, կակաչ – *Papaver*, թփերից՝ մասրենի – *Rosa*, ցարի – *Paliurus*: Եզակի՝ կարմրան – *Tamarix* և ոզնաթուփ – *Acantholimon*:

Երևակման տարածքը ծածկված է տափաստանային բուսականության շյուղախոտային և փետրախոտային ենթատիպերի ներկայացուցիչներով. շյուղախոտ վալեյանը և փետրախոտ մազոտը, որոնք ունեն լայն տարածքում ամրող հանրապետության տարածքում:

Երևակման շրջանի տափաստանային լանդշաֆտներում կաթնատուններից հանդիպում են փոքր սպիտակափոր և սպտակատամ սրբնչակները, սովորական և սարահարթային դաշտամուկը, սովորական աղվեսի հայկական ենթատեսակը :

Սորեխներից քանակապես գերակշռում է սովորական իտալական մորեխը, բնորոշ են ձիուկներ և մքնաթեթեր, աղոթարար իրիսը: Բազմաթիվ են բգեզները՝ սև և փոսիկավոր կարաբուսներ, գերեզմանափորը, զլաֆիրուսները, բրոնզաբգեզները: Թիթեռներից շատ են մաքանները, ճերմակաթիթեռները, զիգենները, բվիկները: Սողուններից այս գոտուն բնորոշ են բարեկազմ օձագլուղ մողեսը /*Ophisops elegans*/ և Անդրկովկասյան մողեսիկը /*E.pleskei*/ և այլն:

Հայցվող տարածքում խոշոր կենդանիների վերգետնյա և ստորգետնյա բներ, որչեր չեն դիտարկվել, սակայն առկա են կրծողների բներ:



Նկար 8.

**Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Թալին-1 տուֆերի շրջանի վտանգված էկոհամակարգերի և բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ տեղեկատվության վերլուծությունից հետևում է, որ Երևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացումը չի հանգեցնի վտանգված էկոհամակարգերի վրա որևէ բացասական ճնշումների դրսուրմանը:

Երևակման շրջանում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ:

Տարածքում չեն արձանագրվել նաև ՀՀ բույսերի կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելա- և ապրելավայրեր (հիմք՝ ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքը. <http://www.mnp.am>):

Երևակման շրջանում՝ Թալին քաղաքային համայնքի տարակից տարածքներում դիտարկվել է ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված խլոպուզ Գրոյտերի և տուղտավարդ Սոֆիայի տեսակները:



Խլոպուզ Գրոյտերի



Տուղտավարդ Սոֆիայի

Երևակման տարածքի ուսումնասիրության ժամանակ այս բուսատեսակները չեն հայտնաբերվել:

Կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներից Երևակման շրջանում (նախկին Թալինի շրջան) հայտնի է բազեանմանների ընտանիքի ներկայացուցիչ բալոբանը: Սակայն այս թռչունը բնադրում է ժայռեզրերին,

Աղյուսակ 9.

Գործողություն	Հիարավոր ազդեցություն	Մեղմման միջոցառում	Մեղմման հայտանիշ
1. Աշխատանքի անվտանգություն	Վեասվածքներ և պատահարներ աշխատանքների կատարման վայրում	<ul style="list-style-type: none"> <li>- Աշխատողներն ապահովվում են Անհատական Պաշտպանության Միջոցներով (ԱՊՄ)</li> <li>- Սարքավորումների շահագործվում են ԱՊՄ օգտագործման կանոնների խիստ պահպանում</li> <li>- Աշխատակիցները իրազեկվում են պաշտպանության հրահանգների վերաբերյալ</li> <li>- Փորձնական բացահանքի երկայնքով ցանկապատի և զգուշացնող նշանների տեղադրում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Զննման ընթացքում սարքավորումների շահագործման և օգտագործման հրահանգների խախտումներ չեն արձանագրվել</li> </ul>
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ	Օդի աղտոտում փոշիով և արտանետումներով	<ul style="list-style-type: none"> <li>- Փոշեգոյացման կանխում հորատման և փորձնական բացահանքի անցման ժամանակ</li> <li>- Աշխատանքների կատարման վայրում նյութերի/թափոնների բաց այրման արգելում</li> <li>- Տեխնիկան և մեքենաները պահել պատշաճ տեխնիկական վիճակում բացառելով ավելորդ արտանետումները</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Լեռնային զանգվածի թրջում</li> <li>- Զննման ընթացքում աշխատանքների կատարման վայրում նյութերի/թափոնների բաց այրում չի հայտնաբերվել.</li> <li>- Զննման ընթացքում տեխնիկան և մեքենաները շահագործվել են առանց հավելյալ արտանետումների</li> <li>- Սոտակայրի բնակիչներից բողոքներ չեն եղել</li> </ul>
	Աղմուկ	<ul style="list-style-type: none"> <li>- Սահմանված աշխատանքային ժամերի պահպանում</li> <li>- Գեներատորների, օդի կոմպրեսորների և այլ ուժային մեխանիկական սարքավորումների շարժիչների ծածկերի փակում շահագործման ընթացքում</li> <li>- Աղմկախացուցիչների տեղադրում շարժական կայանների և սարքավորումների վրա</li> <li>- Սարքավորումների կանխարգելիչ վերանորոգում աղմուկը նվազեցնելու նպատակով</li> <li>- Ոչ անհրաժեշտ և չօգտագործվող սարքավորումների անջատում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Աշխատանքային ժամերից հետո ոչ մի աշխատող սարքավորում չի հայտնաբերվել</li> <li>- Զննման ընթացքում սարքավորումները եղել են բավարար տեխնիկական վիճակում</li> <li>- Զննման ընթացքում միացված չօգտագործվող սարքավորումներ չեն հայտնաբերվել</li> <li>- Սոտակայրի բնակիչներից բողոքներ չեն եղել</li> </ul>